

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻՆ

20.10.2014 06:41



Տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզային համակարգողների հանդիպում:
Հանդիպման ընթացքում մարզային համակարգողները փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին են ներկայացրել յուրաքանչյուր մարզում առկա խնդիրները կապված փաստաբանության զարգացման հետ և այդ հարցերի շուրջ քննարկվել է ընդհանուր մարտավարությունը: Քննարկման մասնակիցները մարզերում անհրաժեշտ են համարել այնպիսի միջոցառումներ իրականացնել, ինչը կնպաստի՝

- փաստաբանների համարձակ գործելաոճին.
 - իրավապահ մարմինների կամ այլ պաշտոնատար անձանց կողմից փաստաբանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու դեպքերը բացառելուն.
 - գրասենյակներ չունեցող փաստաբաններին մեկ գրասենյակի ներքո համախմբելուն.
 - հանրային պաշտպանի մարզային գրասենյակի արդյունավետության բարձրացմանը.
 - փաստաբան-հասարակություն կապի ամրապնդմանը՝ նաև անվճար իրավաբանական խորհրդատվություններ կազմակերպելու միջոցով: Հիշեցնենք, որ մարզային համակարգողների երկու գրասենյակներ են բացվել: Առաջինը՝ Արմավիրի մարզային համակարգողի գրասենյակը՝ Էջմիածին քաղաքում, իսկ երկրորդը՝ Արարատի մարզային համակարգողի գրասենյակը՝ Արտաշատ քաղաքում: Այս գրասենյակներում համապատասխան աշխատանքային պայմաններով են ապահովվել փաստաբանների մի մասը, ովքեր չունեին գրասենյակային պայմաններ: Միաժամանակ, գրասենյակները հասանելի են լինելու բոլոր փաստաբանների համար, ովքեր մարզերի դատարաններում կամ այլ մարմիններում գործել են վարելու:
- Մոտ ապագայում նախապատրաստվում են գրասենյակներ բացել Շիրակի և Լոռու մարզերում:



Առաջարկվող նորություններ




25.10.2013 Ռուսաստանի
Փաստաբանների
Գիլդիայի նախագահի
ԳրոհթՅոնը՝ ՀՀ
Փաստաբանների Պալատի
նախագահին



06.11.2013 Արթուր
Հովհաննիսյանը
նշանակվել է ՀՀ
Փաստաբանների Պալատի
նախագահի Առաջին
Տեղակալ



27.02.2014 ՀՀ
Փաստաբանների Պալատի
նախագահի
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՊԱԾ ԼՅՈՒՔՍ
ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ
ԿԱՅԱՑԱԾ ԴԱՏԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԻ
ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋԱԴԵՊԻ ՀԵՏ



04.03.2014 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՇԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ՆԿԱՄԱՄԲ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })